armavir@mta.gov.am

Օ՛, ՀԱՅՐԵՆԻՔ, ԴԱՌՆ ՈՒ ԱՆՈՒՇ

ք. Երեւան, Նալբանդյան
հեռ./ֆաքս՝ 374-1 52 02 12

URL: www.chi.am
E-mail: chiog@arminco.com

04.03.2015

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղահրամանյան

- Ինչու՞ Հանրապետական կուսակցությունը պաշտոնապես չսատարեց ՀՀԿ-ից ինքնաառաջադրված իր չորս թեկնածուներին: Ըստ ձեզ՝ նրանց մեջ չկայի՞ն արժանավորներ:
- ՀՀԿ-ի կազմակերպչական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Թադևոսյանը նշեց, որ մեր վերոնշյալ հարցի պատասխանն ստանալու համար դիմենք Արմավիրի տարածքային կառույցին, այսինքն՝ Ձեր ղեկավարած կառույցին: Թեկնածուներին սատարելու իրավունքը փաստորեն թողնվել է Ձեր հայեցողությանը, Իսկ Ձեր հարաբերությունները գործող քաղաքապետ Ռուբեն Խլղաթյանի հետ միշտ էլ բարի դրացիական չեն եղել. պահը համարու՞մ եք պատեհ՝ Խլղաթյանից ազատվելու համար
- Ըստ լուրերի՝ Դուք սատարում եք Ձեր օգնականին և եթե Ձեր հայեցողությանն է թողնվել կուսակցության կողմից այդ իրավունքը, ապա Դուք որպես մարզպետ, ի պաշտոնե իրավունք չունեք ընտրություններին խառնվելու: Կցանկանայինք լսել Ձեր մեկնաբանությունը:
- Ձեր կարծիքով՝ Ձեր օգնական Նվեր Պետրոսյանը պատրա՞ստ է քաղաքը ղեկավարել. նրա ո՞ր արժանիքներն են հաշվի առնվել:

«Չորրորդ իշխանություն» թերթի լրագրող Մելանյա Ծառուկյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 2556-15
04 03 2015 թ.